


**«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն**

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.

«23» հունիսի 2026 թ.



Ինստիտուտ՝ Իրավունքի

Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Հայրապետյան Ա.Կ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հարկային իրավունք

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Դասընթացի անոտացիան

«Հարկային իրավունք» դասընթացն ուսումնասիրվում է հարկային օրենսդրության հիմնական իրավակարգավորումները և հարկային իրավունքի սուբյեկտների միջև առկա իրավահարաբերությունների յուրահատկությունները: Գործնականում հարկային օրենսդրությունն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների, որը մեծապես ազդում է, ինչպես պետության, այնպես էլ հասարակության տնտեսական գործունեության վրա:

Բարձր տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը, հնարավորություն է տալիս պարզեցնել հարկային վարչարարությունը և կարգավորել հարկային իրավահարաբերություններն ավելի արդիական գործիքներով: Այս ամենը, միևնույն ժամանակ, հանգեցնում է նոր իրավահարաբերությունների առաջացման, որոնք պահանջում են նոր իրավակարգավորումներ, ուստի հարկային օրենսդրության մշակման ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

«Հարկային իրավունք» դասընթացի նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև հարկային իրավունքի հիմնահարցերն ինքնուրույն ուսումնասիրողների համար: Վերջինս կարող է նաև գործնական կիրառելիություն ունենալ հարկային, դատական և պետական այլ մարմինների աշխատակիցների համար:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Հարկային իրավունք» դասընթացի նպատակն է ապահովել ուսանողների կողմից, հարկային իրավունքի տեսության հիմնական դրույթների, հարկերի հավաքագրման, հարկային օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունների, ինչպես նաև հարկային մարմինների գործառնությունների և հարկային պարտավորությունների կատարումն ապահովող մեթոդների վերաբերյալ համալիր գիտելիքների յուրացումն:

«Հարկային իրավունք» դասընթացի հիմնական խնդիրներ են՝

- ապահովել ուսանողների առավելագույն ներգրավվածությունը կրթական գործընթացին,
- օգնել ուսանողներին հասկանալ հարկային իրավունքի համակարգը, առանձնահատկությունները և կարգավորման առարկան,
- ուսումնասիրել հարկային օրենսդրության սկզբունքները և հարկի հիմնական գործառնությունները,

- բացահայտել հարկային օրենսդրության հիմնական օրինաչափությունները,
- հասկանալ պետության հարկային համակարգը,
- պատկերացում կազմել հարկման օբյեկտների, սուբյեկտների, հարկային բազայի, հարկային դրույքաչափերի, հարկային ժամանակաշրջանի, հարկային պարտավորությունների կատարման ժամկետների ու կարգի վերաբերյալ,
- տարբերակել և կարողանալ դասակարգել հարկերի տեսակները,
- ձևավորել ուսանողների մոտ համալիր գիտելիքներ հարկային ստուգումների հիմնական առանձնահատկությունների և տեսակների, դրանց անցկացման կարգի, հարկային օրենսդրության խախտման համար պատասխանատվության և հարկային մարմնի կողմից կայացված որոշումների բողոքարկման վերաբերյալ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

«Հարկային իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում հարկային օրենսդրությունը և հարկային իրավահարաբերությունները կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«Հարկային իրավունք» դասընթացի առարկան՝ հարկային իրավունքի սուբյեկտների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են, մասնավորապես, գործնականում հարկային օրենսդրության դրույթների կիրառումը, ինչպես նաև հարկային մարմնի կողմից իրականացվող գործունեությունը:

Դասընթացի մուտքային պահանջները

«Հարկային իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքն ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Հարկային իրավունքի տեղն իրավական համակարգում:
2. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող հարկերի և վճարների համակարգը:
3. Հարկային իրավահարաբերությունների օբյեկտները:
4. Հարկային իրավահարաբերությունների առարկան և մեթոդը:
5. Հարկային իրավահարաբերություններում ներգրավված անձանց (հարկատուներ, վճարներ վճարողներ, հարկային գործակալներ, բանկեր, հարկային մարմիններ, այլ անձինք) իրավունքներն ու պարտականությունները:
6. Հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացման կարգը:
7. Հարկային ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման տեսակները և կարգը:
8. Հարկային օրենսդրության խախտումների համար նախատեսված պատասխանատվության տեսակները:

Հմտությունները՝

• գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. Որոշել հարկային ոլորտում իրավական խնդիրների էությունը:
2. Կողմնորոշվել հարկային իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:
3. Ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի և պետական մարմինների բացատրական նյութերի վրա:
4. Պաշտպանել հարկային իրավահարաբերությունների այս կամ այն մասնակցի (հարկ վճարողի, հարկային մարմնի և այլն) շահերը:

• ընդհանրական խնացական հմտությունները՝

1. Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները:
2. Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

• **ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝**

1. Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան և պետական մարմինների բացատրական նյութերը:
2. Վերլուծել հարկային իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը:
3. Կատարել հարկային ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն:
4. Կարողանալ աշխատել հարկային ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները

«Հարկային իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Հարկային իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Հարկային իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 3-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
---------------------------------	--------------------------

1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	34
1.1.1.Դասախոսություններ	18
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	38
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Հարկային իրավունքի ընդհանուր դրույթները:	4	2	2
Թեմա 2. Պետության հարկային համակարգը:	3	2	1
Թեմա 3. Հարկի և վճարի սահմանման ընդհանուր պայմանները:	3	2	1
Թեմա 4. Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):	2	1	1
Թեմա 5. Ակցիզային հարկը:	2	1	1

Թեմա 6. Շահութահարկը:	2	1	1
Թեմա 7. Եկամտային հարկը:	2	1	1
Թեմա 8. Հարկման հատուկ համակարգերը:	2	1	1
Թեմա 9. Բնապահպանական հարկը:	2	1	1
Թեմա 10. Ճանապարհային հարկը:	2	1	1
Թեմա 11. Տեղական հարկերը:	2	1	1
Թեմա 12. Պետական և տեղական վճարների տեսակները:	2	1	1
Թեմա 13. Հարկային վարչարարության ընդհանուր դրույթները:	2	1	1
Թեմա 14. Հարկային իրավախախտումը և հարկային պատասխանատվությունը:	2	1	1
Ընդամենը	32	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Հարկային իրավունքի ընդհանուր դրույթները:

1. Հարկի հասկացությունը և հիմնական գործառույթները:
2. Հարկային իրավունքի հասկացությունը և կառուցվածքը:
3. Հարկային իրավունքը իրավական համակարգում:
4. Հարկային իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը:
5. Հարկային իրավունքի աղբյուրները և սկզբունքները:
6. Հարկային իրավունքում կիրառվող հիմնական հասկացությունները:

Թեմա 2. Պետության հարկային համակարգը:

1. Հարկային իրավահարաբերությունների կարգավորումը:
2. Հարկային իրավունքի սուբյեկտները:
3. Հարկային համակարգի սկզբունքները:
4. Հարկերի տեսակները:
5. Հարկման համակարգերի տեսակները:

Թեմա 3. Հարկի և վճարի սահմանման ընդհանուր պայմանները:

1. Հարկման օբյեկտը:
2. Հարկման բազան:
3. Հարկի դրույքաչափը
4. Հաշվետու ժամանակաշրջանը
5. Հարկի հաշվարկման կարգը
6. Հարկի վճարման կարգը և ժամկետները

Թեմա 4. Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

1. Ավելացված արժեքի հարկի հասկացությունը:
2. Ավելացված արժեքի հարկ վճարողները:
3. Ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները:
5. Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքները:
6. Ավելացված արժեքի հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 5. Ակցիզային հարկը:

1. Ակցիզային հարկի հասկացությունը:
2. Ակցիզային հարկ վճարողները:
3. Ակցիզային հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:
5. Ակցիզային հարկից ազատված գործարքները:

6. Ակցիզային հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 6. Շահութահարկը:

1. Շահութահարկի հասկացությունը:
2. Շահութահարկ վճարողները:
3. Շահութահարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Ձեռնարկատիրական ծախսերը կորուստները և այլ նվազեցումները:
5. Շահութահարկի վճարումից ազատումը:
6. Շահութահարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:
7. Շահութահարկի կանխավճարները:

Թեմա 7. Եկամտային հարկը:

1. Եկամտային հարկի հասկացությունը:
2. Եկամտային հարկ վճարողները:
3. Եկամտային հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Եկամուտների ստացման աղբյուրները և նվազեցվող եկամուտները:
5. Եկամտային հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 8. Հարկման հատուկ համակարգերը:

1. Շրջանառության հարկի հասկացությունը:
2. Շրջանառության հարկ վճարողները:
3. Շրջանառության հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Շրջանառության հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:
5. Միկրոձեռնարկատիրության համակարգը:
6. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները:
7. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելը:
8. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելը:

Թեմա 9. Բնապահպանական հարկը:

9. Բնապահպանական հարկի հասկացությունը:
10. Բնապահպանական հարկ վճարողները:
11. Բնապահպանական հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
12. Բնապահպանական հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 10. Ճանապարհային հարկը:

1. Ճանապարհային հարկի հասկացությունը:
2. Ճանապարհային հարկ վճարողները:
3. Ճանապարհային հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Ճանապարհային հարկի արտոնությունները:
5. Ճանապարհային հարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 11. Տեղական հարկերը:

1. Անշարժ գույքի հարկի հասկացությունը:
2. Անշարժ գույքի հարկ վճարողները:
3. Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
4. Անշարժ գույքի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:
5. Փոխադրամիջոցների գույքահարկի հասկացությունը:
6. Փոխադրամիջոցների գույքահարկ վճարողները:
7. Փոխադրամիջոցների գույքահարկի հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը:
8. Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը և հաշվետու ժամանակաշրջանը:

Թեմա 12. Պետական և տեղական վճարների տեսակները:

1. Պետական վճարների հասկացությունը:
2. Պետական վճարների տեսակները՝ պետական տուրքը, բնօգտագործման վճարը, սոցիալական վճարը, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության

տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը և կենսաթոշակային վճարը:

3. Տեղական վճարների հասկացությունը:
4. Տեղական վճարների տեսակները՝ տեղական տուրքը և տեղական վճարը:

Թեմա 13. Հարկային վարչարարության ընդհանուր դրույթները:

1. Հարկային վարչարարության հասկացությունը:
2. Հարկ վճարողների հաշվառումը և սպասարկումը:
3. Հարկային հսկողության հասկացությունը:
4. Հարկային ստուգումների տեսակները:
5. Հարկային ուսումնասիրությունների տեսակները:

Թեմա 14. Հարկային իրավախախտումը և հարկային պատասխանատվությունը:

1. Հարկային իրավախախտման հասկացությունը:
2. Հարկային պատասխանատվության հասկացությունը:
3. Վարչական պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար:
4. Քրեական պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար:

Հարցեր և առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար:

Հարցաշար

1. Հարկի հասկացությունը և հիմնական գործառնությունները:
2. Հարկային իրավունքի հասկացությունը, կառուցվածքը և տեղն իրավական համկարգում:
3. Հարկային իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը:
4. Հարկային իրավունքի աղբյուրները և սկզբունքները:
5. Հարկային իրավունքում կիրառվող հիմնական հասկացությունները:

6. Հարկային իրավահարաբերությունների կարգավորումը:
7. Հարկային իրավունքի սուբյեկտները:
8. Հարկերի և հարկման համակարգերի տեսակները:
9. Հարկի և վճարի սահմանման ընդհանուր պայմանները:
10. Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
11. Ակցիզային հարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
12. Շահութահարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
13. Եկամտային հարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
14. Շրջանառության հարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
15. Միկրոձեռնարկատիրության համակարգը:
16. Բնապահպանական հարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
17. Ճանապարհային հարկի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
18. Տեղական հարկերի հասկացությունը և սահմանման ընդհանուր պայմանները:
19. Պետական վճարների հասկացությունը և տեսակները:
20. Տեղական վճարների հասկացությունը և տեսակները:
21. Հարկային վարչարարության հասկացությունը և տեսակները:
22. Հարկային հսկողության հասկացությունը և տեսակները:
23. Հարկային իրավախախտման հասկացությունը:
24. Հարկային պատասխանատվության հասկացությունը և տեսակները:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Հարկային իրավունք, ուսումնական ձեռնարկ, Գ. Ա. Սուքիասյան, Ա. Հ. Օսիկյան, Ն. Գ. Սուքիասյան, Երևան, 2011, 383 էջ:
2. Ֆինանսական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Ս. Մուրադյան, Է. Շաթիրյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 280 էջ:
3. Налоговое право: учебник для вузов / Ю. А. Крохина. — 10-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2023. — 503 с.
4. Налоговое право 9-е изд., пер. и доп. Учебник для вузов - М.: Издательство Юрайт - 2021 – 464 с.

5. Налоговое право России: учебник для вузов / А. А. Тедеев, В. А. Парыгина. — 8-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2023. — 410 с.
6. Налоговое право: учебное пособие для вузов / Р. Д. Фархутдинов. — 2-е изд., перераб. и доп. — Москва: Издательство Юрайт, 2023. — 133 с.
7. Налоговое право. Региональные и местные налоги и сборы: учебное пособие для среднего профессионального образования / Е. В. Мишле. — 2-е изд. — Москва: Издательство Юрайт, 2023. — 172 с.
8. Налоговое право: учебник для бакалавриата / Козырин, А. Н., 2021. — 488 с.
9. Налоговое право: Учебник для вузов / Пепеляев С.Г. - М.: Альпина Пабл., 2016. - 796 с.
10. Налоговое право зарубежных стран: учебник для вузов / Е. В. Килинкарлова. — Москва: Издательство Юрайт, 2023. — 333 с.
11. Международное налоговое право: учебник и практикум для вузов / ответственные редакторы А. А. Копина, А. В. Реут. — Москва: Издательство Юрайт, 2023. — 239 с.

Դասընթացի ասպահովվածությունն առցանց աղբյուրներով

1. <https://www.arlis.am/>
2. <http://www.eaeunion.org/>
3. <https://www.zakonrf.info>
4. <https://www.petekamutner.am>
5. <https://www.nalog.gov.ru>